«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ>>

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Սահրադյան

ՄԱՐԶ՝ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<Մարգարայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ներածություն _____ 1
Գրական ակնարկ _____ 2-4
Մեթոդների նկարագրություն _____ 5
Հետազոտության ընթացք _____ 6-7
Եզրակացություն _____ 8
Գրականության ցանկ _____ 9
Հավելված _____ 10-12

Ներածություն

<<Անհատի հետաքրքրություններն ու կարիքները, վերաբերմունքն ու կողմնորոշումները միշտ ուշադրության հետևում են>>:

Ս. Լ. Ռուբինշտեյն

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը:

ՈՒշադրությունը կենտրոնացվածությունն է այն օբյեկտի վրա, որը անձի համար որոշակի նշանակություն ունի: Վերջին մի քանի տարիների ընթացքում հոգեբանները նկատել են բացակայության միտումների աճ, զուգորդված տարրական դասարանների երեխաների հիպերակտիվության հետ: Յուրաքանչյուր մանկավարժ գիտե, որ սովորողների ուշադրությոնը գրավելը այնքան էլ դժվար չէ,բայց պահպանել այն ողջ պահանջվող ժամանակի ընթացքում հաճախ հեշտ չէ:Դրա համար պետք է
հատուկ մանկավարժական հնարներ ու մեթոդներ կիրառել: Այդ հնարներին ու մեթոդներին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության գործում: Կիրառվող հետաքրքիր մեթոդը ստեղծում է ուրախ տրամադրություն: Մեթոդները ունենում են դաստիարակչական և ուսուցողական նշանակություն: Այս դեպքում այն հանդես է գալիս որպես մեթոդ՝ գիտելիքը տեղ հասցնելու համար:

Թեմայի ուսումնասիրման նպատակներն ու խնդիրները:

Այս աշխատանքը նախատեսված է տարրական դասարաններում ուսուցչի կողմից մեթոդների կիրառմանը, որոնք չնայած իրենց բարդ իրականացման ձևերին, շատ արդյունավետ ու նպատակային են ուսուցման գործընթացում: Մեթոդներն ունեն տարբեր նպատակներ և լուծում են ուսունմական տարբեր խնդիրներ: Կիրառվող մեթոդները նպաստուն են ուսումնական գործընթացը ավելի հետաքրքիր, աշխույժ և հասկանալի դարձնելուն: ՈՒսումնասիրվող և կիրառվող մեթոդները նպաստում են սովորողների մոտ հմտությունների ձևավորմանը:

Հասկացություն ուշադրության մասին:

ՈՒշադրությունը հոգեկան գործունեության ուղղվածությունը և նրա կենտրոնացվածությունն է այն օբյեկտի վրա,որը անձի համար որոշակի նշանակություն ունի: ՈՒղղվածություն ասելով պետք է հասկանալհոգեկան գործնեության ընտրական բնույթը, նրա օբյեկտի կամածին կամ ոչ կամածին ընտրությունը: Երբ դպրոցականը լսում է այն, ինչ նրան պատմում է ուսուցիչը, ապա նա գիտակցորեն ընտրել է լսելու այդ գործունեությունը, նրա ուշադրությունը ենթարկված էայդ դրված նպատակին: Հոգեկան գործունեության ուղղվածության հետ մեկտեղ ուշադրությունը ենթադրում է նաև նրա կենտրոնացվածությունը:Կենտրոնացվածությունը քիչ թե շատ նշանակալից չի կարող լինել: Կարելի է կարդալ դժվար մի գիրք, աշխատելով հասկանալ նրանում պարունակվող յուրաքանչյուր միտք: Այս դեպքում կենտրոնացվածությունը շատ մեծ կարող է լինել: Տնային շարադրություն կատարող աշակերտը, երբեմն չի լսում խոսակցություններ, հեռուստացույցի ձայնը, չի նկատում, որ դրսում մթնել է և լույսը
վառելու ժամանակն է: Նախակրթական տարիքի երեխաների ուշադրության զարգացումըանհրաժեշտ է նորածնի դաստիարակության և միջին, և ավագ դպրոցի նախապատրաստման համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում հոգեբանները նկատել են բացակայության միտումների աճ, զուգորդված տարրական դասարանների երեխաների հիպերտակտիվության հետ: Եթե երեխան չի կարող իրեն կենտրոնացնել ինչ որ բանի վրա, ապա նա կարոտում է կրթական ծրագրի հիմնական նյութը, որը պետք է յուրացվի հետագա հաջող ուսուցման համար: Նման դեպքերում անհրաժեշտ է զարգացնել ուշադրությունը կրտսեր սովորողների մոտ : Ֆիզիկական վարժությունները կօգնեն զգալի հաջողությունների հասնել դրանում:

ՈՒշադրության տեսակները: Կախված մարդու գիտակցական ընտրությունից և կարգավորման առանձնահատկություններից՝ առանձնացնում ենք

- Կամածին
- Ոչ կամածին
- Հետկամածին

ուշադրության տեսակները:

Կամածին ուշադրություն: ՈՒշադրության այն տեսակը, որը կապված է գիտակցաբար դրված նպատակի և կամային ջանքերի հետ, որն էլ կոչվում է կամածին ուշադրություն: Կամածին ուշադրությունը մեր կյանքի դրսևորումն է: Այն չի հասունանում օրգանիզմում, այլ

երեխայի ձևավորվում է մեծահասակների հետ շփման ընթացքում: Երբ երեխան որոշում է կենտրոնանալ այս կամ այն օբյեկտի, երևույթի վրա, ապա աշխատում է կամածին ուշադրությունը: Գրեթե ամենագիտակից տարիքից երեխան լսում է այնպիսի բառեր, ինչպիսիք են՝«ուշադիր եղիր դասարանում», <<ուշադիր նայիր>>, <<ուշադիր լսիր ուսուցչին>> և այլն: Նույնիսկ եթե երեխան դեռ լիովին չի հասկանում<<ուշադրություն>> բառի իմաստը, ծնողի խոսքից պարզ է դառնում, որ նրա խնդիրն էինչ-որ բան հասկանալ:

Ոչ կամածին ուշադրություն: Սա ուշադրության այն տեսակն է, որն առաջ է գալիս մարդու կամքից անկախ, ինքնաբերաբար, առանց գիտակցական նպատակադրման: Ոչ կամածին ուշադրությունը առանց որևէ ջանքի է տեղի ունենում: Փոքր երեխայի մոտ ակամա ուշադրության մեխանիզմը լավ զարգացած է, որպեսզի նա կարողանա հեշտությամբ հիշել պայծառն ու գունագեղը: Ուստի կրտսեր դպրոցական տարիքի երեխաների առաջադրանքները պետք է կառուցվեն <<գունավու, այսինքն նկատելի>> սկզբունքի վրա:

Հետկամածին ուշադրություն: Հետկամածին է կոչվում ուշադրության այն տեսակը, որը ծագում է գործունեության մեջ մարդու մտնելու և աշխատելու ընթացքում, հետաքրքրության շնորհիվ: Այսինքն, երբ կամային ջանքերի շնորհիվ աշակերտը ուշադրությունը կենտրոնացնում է, որևէ գործունեության վրա,որը ստիպված է կատարել, բայց այն իրեն չի հետաքրքրում և սկսում է իրագործել այն: Այդ գործունեությունը աստիճանաբար սկսում է մեզ երեխաներին դուր գալ և աշակերտը չի էլ նկատում, թե ինչպես է սկսում իրեն դուր գալ և կլանվում է դրա մեջ: Այս դեպքում ուշադրությունը կամածինից դառնում է հետկամածին: ՈՒշադրության այս տեսակը որակապես տարբեր է ինչպես ոչ կամածին, այնպես էլ կամածին ուշադրությունից:

ՈՒշադրության առանձնահատկությունները:

ՈՒշադրության բնորոշ առանձնահատկություններից են՝

- կենտրոնացումը
- ծավալը
- տեղափոխելիությունը
- բաշխումը
- կայունությունը
- լարվածությունը
- ցրվածությունը

ՈՒշադրության կենտրոնացումը: ՈՒշադրության կենտրոնացումը դիտվում է այն

ժամանակ, երբ մարդու հոգեկան ակտիվությունը վերաբերում է միայն այն առարկայի կամ գործունեությանը, ինչով նա զբաղված է տվյալ ժամանակահատվածում: Ուշադրության կենտրոնացման բարձր աստիճանը մտավոր, հատկապես ստեղծագործական աշխատանքում շոշափելի արդյունքների հասնելու հիմնական պայմաններից մեկն է: Ուշադրության կենտրոնացմանը նպաստում են լռությունը, մեկուսացումը և այլն:

Ուշադրության ծավալը: Ուշադրության ծավալը արտահայտում է առարկաների, օբյեկտների այն քանակը, որոնք միաժամանակ կարող են ընդգրկված լինել ուշադրության կենտրոնում:

Ուշադրության տեղափոխելիությունը: Ուշադրության տեղափոխելիությունը այն է , որ մարդը գիտակցաբար իր ուշադրությունը մի օբյեկտից տեղափոխում է մեկ այլ օբյեկտի վրա:

Ուշադրության բաշխումը: Ուշադրության բաշխում ասելով հասկանում ենք միաժամանակ մի քանի օբյեկտներ ուշադրության ոլորտում պահելու և մի քանի գործողություն կատահելու հնարավորությունը:

Ուշադրության կայունացումը: Ուշադրության կայունացումը այն որակն է, որն արտահայտում է ուշադրության կենտրոնացվածության աստիճանը տվյալ օբյեկտի վրա:

Ուշադրության լարվածություն: Ուշադրության լարվածություն ասելով հասկանում ենք հոգեկան-նյարդային եռանդի այն քանակությունը, որը ծախսվում է գործունեության կատարման ընթացքում: Ուշադրության լարվածությունը պայմանավորված է ներքին դրդապատճառների առկայությամբ:

Ցրվածություն: Ուշադրության ցրվածությունը ուշադրությունը որևէ օբյեկտի վրա տևականորեն կենտրոնացնելու անկարողությունն է: Ցրվածությունը ուշադրության բացասական կողմն է:Ցրվածություն ասելով երբեմն հասկանում ենք աշխատանքի մեջ խորասուզված լինելը, որի շնորհիվ աշակերտը շրջապատում ոչինչ չի նկատում:Հասկանալի է ,որայն թուլատրելի է այն դեպքում, երբ նա կարող է ամբողջապես նվիրվել մեկ առաջադրանքի: Բայց իրականում պետք է լինում որևիցե գործով զբաղված լինելով, այնուամենայնիվ հետևել շրջապատող իրադարձության փոփոխություններին, կարողանալ բաշխել ուշադրությունը: Ցրվածության բոլորովին այլ տեսակ առկա է այն դեպքում, երբ ոչ մի բանի վրա ի վիճակի չէ կենտրոնանալ, երբ նա անընդահատ մեկ օբյեկտից կամ երևույթից անցնում է մյուսին՝ ոչ մի բանի վրա կանգ չառնելով:

ՈՒշադրության զարգացման խնդիրները:

Որոշ երեխաների երբեմն շատ դժվար է նստել և ինչ-որ բան անել: Դա ակնհայտ է , քանի որ կրտսեր դպրոցական տարիքի երեխան բավականին ակտիվ է և ձգտում է վազել, խաղալ: ՈՒշադրության զարգացման նման խնդիրները մեկուսացված չեն, դրա համար փորձում ենք երեխային հետաքրքրել իրեն հարազատով՝ պայծառ նկարներով, խաղալիքներով և այլն: Երբ երեխայի հետաքրքրությունն <<գրավվի>>, նոր կկարողանանք ինչ-որ բան սովորեցնել: Օրինակ կարող ենք ցույց տալ ուշադրությունը զարգացնող նկարներ և պատմել, թե ինչպես է ճիշտ նկարված այս կամ այն առարկան դրա վրա: Մի խումբ երեխաների հետ աշխատելիս կարող ենք գործել<<ով է ավելի լավ>> սկզբունքը: Խրախուսվում է այն երեխան,ով առաջինն է առանց սխալների կատարում տրված առաջադրանքը: Աշակերտը պետք է հիշի որոշակի գործողությունների ցուցումներ և ցանկացած երեխայի մոտ հմտություններ են ձևավորվում: Հետևաբար միանգամայն նորմալ է , որ երեխան բարձրաձայն պատասխանի իր հետագա բոլոր քայլերը: ՈՒշադրության զարգացման համար առաջադրանքները նախատեսված են երեխայի մոտ հետաքրքրություն արթնացնելու նպատակով: Ի վերջո, եթե երեխան տարվում է նա կցանկանա ավելին իմանալ ինչ-որ բանի մասին: Եթե իրեն դուր է գալիս ինչ-որ բան, հա կցանկանա կրկին ու կրկին կրկնել /նույն վարժություններն կամ թեստերը/:

Ըստ այդ սկզբունքի, կրտսեր դպրոցականների ուշադրության զարգացումը գործում է, մինչդեռ խնդիրները կառուցվում են ըստ մեթոդի՝ պարզից բարդ, որպեսզի երեխան չկորցնի հետաքրքրությունը: Բավականին հաճախ կան երկընտաքներ, կապված երեխայի ուշադրությունը զարգացնելու անկարողության հետ, որի պատճառով երեխան հասկանում է դժվարությունները դպրոցում և այլ երեխաների հետ խաղում:

Նման խնդիրների մի քանի տեսակ կա.

1. Փոքր ծավալ:

Երեխան չի կարող միաժամանակ կենտրոնանալ երկու օբյեկտի վրա և հիշել դրանք:

2. Անկանոն ուշադրություն և թույլ կենտրոնացում:

Երեխան չի կարող երկար ժամանակ մի բանի վրա կենտրոնանալ, որքան էլ որ դա գրավիչ լինի:

3. **Ընտրողականության խնդիրը:**

Երեխան ի վիճակի չէ իրեն ստիպել կենտրոնանալ այն խնդրի լուծման համար անհրաժեշտ առարկայի վրա: Չկա վերացական մտածողություն, երեխան փորձում է հիշել իրեն հանձնարարված ամեն ինչ և արդյունքում ոչինչ չի հիշում:

Մեթոդների նկարագրություն

Յուրաքանչյուր մանկավարժ գիտի, որ սովորողների ուշադրությունը գրավելը այնքան էլ դժվար չէ: Բայց պահպանել այն ողջ պահանջվող ժամանակի ընթացքում հաճախ հեշտ չէ: Դրա համար պետք է հատուկ մանկավարժական մեթոդներ կիրառել: Ուսուցանող մեթոդները ցանկացած ուսումնական նյութի ուսուցման գործընթացը դարձնում է հետաքրքրաշարժ, գործունեությունը՝ գրավիչ ստեղծում աշխատանքային մթնոլորտ,թեթևացնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Հետազոտության ընթացքը

Քառաբաժան մեթոդի նկարագրությունը և կիրառումը դասապրոցեսում:

Աշակերտների անտարբերությունը, առանց տրամաբանելու, հաճախ սխալ պատասխաններ տալը, դժվար, արագ կողմնորոշվելը առիթ հանդիսացավ իմ հետազոտական աշխատանքի համար:

Հետազոտական աշխատանքը կատարելիս փորձեցի պարզել, թե ինչու են աշակերտները շատ հաճախ սխալ և առանց տրամաբանելու պատասխանում տրված հարցերին: Այդ նպատակով որոշեցի կիրառել <<Քառաբաժան>> մեթոդը, որը կբարձրացնի դասի արդյունավետությունը և կնպաստի նրանց ուշադրության զարգացմանը: Քառաբաժանը հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է տեքստի հետ աշխատելիս: Այն կարող է կիրառել մեծ կամ փոքր խմբերով, կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքն սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ /գրատախտակ/, որը անհրաժեշտ է բաժամել չորս մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Այս մեթոդի հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոխել:

Ինչ տեսաք	Ինչ լսեցինք

Ինչ զգացինք	Ինչ սովորեցինք

Քառաբաժան աղյուսակը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությանբ աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին:

Կշռադատման փուլում աշակերտները բանավոր պատասխանեցին տրված աղյուսակում առաջադրված հարցերին՝ ինչ էին տեսնում, ինչ էին լսում, ինչ էին զգում և ինչ սովորեցին:

Պատասխաներն ինքնուրույն էին, սրտաբուխ, նույնիսկ շատ հուզիչ:
ԵՎ այսպես հետազոտությունը սկսեցի Մայրենիի դասին, թեման էր Պատվական Խաչատրյանի <<Հայաստան>> բանաստեղծությունը: Քառաբաժան մեթոդի կիրառման հիմնական նպատակն էր ստուգել աշակերտների ուշադրությունը և զարգացնել այն: Դասի խթանման փուլում վերլուծեցինք դասը և դրա վրա աշխատելիս կիրառեցի քառաբաժան մեթոդական հնարը: Դասապրոցեսում կատարվող աշխատանքը բազմաբնույթ էր:

ՕՐ 1-ին. Դասարանը բաժանեցի երկու խմբի և առաջարկեցի համագործակցելով լրացնել քառաբաժան աղյուսակը: Այնուհետև ամեն խումբ ներկայացրեց իր գրանցումները, համեմատեցին, քննարկեցին և լրացումներ արեցին:

Որևէ աշխատանք իրականացնելիս պետք է նկատել արդյունք դրական դինամիկա և որպեսզի արձանագրեի այդ դինամիկան պետք է անցկացնեի նույն հանձնարարությունը երկրորդ անգամ, ստուգելու նրանց կատարած աշխատանքի արդյունավետությունը: Դասի ընթացքում ունեցա վրիպումներ, սակայն դրան չէր զիջում նաև հաջողված, հետաքրքրքշարժ և ուշադրությունը զարգացնող մեթոդի կիրառումը:

Օր 2-րդ. Նույն աշխատանքը հանձնարարեցի կատարել երկրորդ օրը և աշակերտներին ներկայացրեցի, որ այս աշխատանքը չի գնահատվելու: Նշեցի, որ աշխատանքը ուշադրությունը ստուգելու համար է:

Նույն մեթոդը նույն հարցերով կիրառվեց 2-րդ անգամ: Այս անգամ աշխատանքը կատարելու համար աշակերտներին տրվեց 20րոպե: Աշակերտները ժամանակին ավարտեցին աշխատանքը:

Ստուգելով բոլոր աշխատանքները, այն ներկայացրեցի տոկոսային հարաբերությամբ: Արդյունքները հուսադրող էին:

1-ին օրը դասարանի 60%-ը աշխատանքը կատարել էր անսխալ, 25%-ը կատարել էր թույլ տալով վրիպակներ, 15%-ը բացառապես չէր կատարել աշխատանքը:

2-րդ օրվա աշխատանքի արդյունքներից գոհ եմ: Դասարանի 85% -ը գրել էին անսխալ, 10%- ը ունեին վրիպակներ, 5%-ը դժվարացել էին պատասխանել տրված հարցերին:

Եզրակացություն

Իմ ուսումնասիրած մեթոդական գրականության, վարած դասի, քառաբաժան մեթոդի կիրառման արդյունքում եկա հետևյալ եզրակացության:

1. Նկատեցի մեթոդների կիրառության արդյունավետությունը տարրական դպրոցում:
2. Քառաբաժան մեթոդը կիրառելիս աշակերտները հանդիպեցին որոշ դժվարությունների, հատկապես առաջին փուլում՝ անուշադրության պատճառով:
3. Սեփական փորձով նկատեցի, որ մեթոդի ճիշտ ընտրությունն ու կազմակերպումը նպաստում է նյութի հեշտ ընկալմանը:
4. Իմ փորձով համոզվեցի, որ մեթոդները կարելի է կիրառել դասի ցանկացած տեսակի ցանկացած փուլում:
5. Բացահայտեցի աշակերտների հուզականությունը:
6. Աշխատանքը նկատելի դարձրեց մեթոդի դրական դերն ու կարևորությունը կրտսեր դպրոցում:

Գրականության ցանկ

1. << Ընդհանուր հոգեբանություն-Ուշադրության զարգացում,
Ինչպես պլանավորել Մայրենիի դասը 4>> ---Հեղինակներ- Կարինե Թորոսյան,

Կարինե Չիբուխչյան, Աստղիկ Բալայան

2. <<Կամուրջներ պատերի փոխարեն: Ուսուցման էկոլոգիա>>-- Սերոբ Խաչատրյան 2014

ՀԱՎԵԼՎԱԾ

Ի՞նչ տեսանք Մեր պապերի քրտինքը թուխ ճակատին, ջանքերն ու տանջանքները:	Ի՞նչ լսեցինք Թե ինչպես են մեր պապերը պահել, պաշտպանել և հզորացրել մեր հայրենի երկիրը:
Ի՞նչ զգացինք Հուզմունք, Ուրախություն:	Ի՞նչ սովորեցինք Արիություն, Հայրենասիրություն:

Աշխատանքի վերլուծություն՝

60%-ը անսխալ

25%-ը վրիպումներ
15%-ը չկարողացան կատարել
85%-ը կատարեցին անսխալ
10%-ը ունեին վրիպումներ
5%-ը դժվարացան կատարել